



Մանուկ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Տնտեսագիտության
թեկնածու, դոցենտ

1998 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրժՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)՝ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ: 2002 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, իսկ 2009 թ.՝ դոցենտի գիտական կոչում: 2010 թ.-ից ՀՊՏՀ վիճակագրության ամբիոնի դոցենտ է: 2014-2018 թթ. աշխատել է որպես ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի դեկան: 2018 թ.-ից զբաղեցնում է կառավարման ֆակուլտետի դեկանի պաշտոնը:

Հեղինակ և համահեղինակ է մոտ երեք տասնյակ գիտական հոդվածների, կոլեկտիվ մենագրությունների, զեկույցների:

 <https://orcid.org/0000-0003-0779-7000>

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԳՐԱՎԶՈՒԹՅՈՒՆԸ

ԵՎ ԾՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎԱՅՐԻՎԵՐՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

DOI: 10.52174/2579-2989_2022.3-40

Հիմնաբառեր. պողաբերության գործակից, նպաստներ, ծնելիության խթանում, արձակուրդ, երեխաների խնամք, ճկուն աշխատանքային ժամանակացույց

20-րդ դարի վերջին աշխարհում արձանագրվել է համաշխարհային ծնելիության մակարդակի նվազման միտում: Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ 21-րդ դարի կեսերին համաշխարհային պողաբերության անկումը կշարունակվի, և 2045-2050 թթ. վերարտադրողական տարիքի մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների միջին թիվը կամ, որ նույնն է, պողաբերության գործակիցը կկազմի 2.2, իսկ 2100 թ.-ին՝ 1.9: Ուստի պատահական չէ, որ ծնելիության ցածր մակարդակ ունեցող բազմաթիվ երկրներ այս առումով ձեռնարկել են խթանող միջոցառումներ:

Աշխարհի գրեթե բոլոր երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, ծնելիության խթանման սոցիալ-ժողովրդագրական քաղաքականության շրջանակում իրականացվում են հիմնականում երկու խումբ միջոցառումներ՝ օրենսդրորեն սահմանված արձակուրդներ և նպաստներ:

20-րդ դարի կեսերին ՀՀ-ում վերարտադրողական տարիքի մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների միջին թիվը 4.7-ից նվազել և 2020 թ.-ին կազմել է 1.66: Այսինքն՝ ՀՀ-ում դիտարկվող ժամանակահատվածում արձանագրվել է նեղացված վերարտադրություն, բացի այդ, չպետք է մոռանալ նաև աղքատության, արտագաղթի, գործազրկության բարձր մակարդակի և Արցախյան պատերազմի ու համավարակի բացասական հետևանքների մասին:

Ծնելիության անկման միտումների պահպանման դեպքում մոտ ապագայում Հայաստանը հայտնվելու է շար ավելի վրանգավոր վիճակում, քանի որ վերարտադրողական տարիքի բնակչությունն անընդհատ նվազելու է, ինչն իր հերթին հանգեցնելու է

բնակչության վերարտադրության հնարավորության նվազմանը: Հերևաբար՝ հրապապ են դառնում ՀՀ-ում ծնելիության մակարդակի բարձրացման՝ գործող ծրագրերի վերանայումը և դրանք առավել գրավիչ դարձնելու ուղղությամբ համապատասխան քայլերի ձեռնարկումը:

Հոդվածը ՀՀ-ում և արտասահմանյան մի շարք երկրներում ծնելիության մակարդակի անկման պատճառների, ազգային կառավարությունների կողմից ծնելիության խթանման ուղղությամբ իրականացվող միջոցառումների, ծնելիության մակարդակի վրա դրանց ունեցած ազդեցությունների վերլուծության մասին է:

21-րդ դարը, կանանց «ժողովրդագրական դիտանկյունից», կարելի է բնութագրել որպես հասարակության մեջ նրանց դերի ու վարքագծի փոփոխության, աշխատանքի, կարիերայի աճի, ամուսնության և մայրանալու միջին տարիքի բարձրացման, համաշխարհային պտղաբերության գործակցի նվազման, ինչպես նաև ժողովրդագրական ծերացման դարաշրջան: Վերջին երեք տասնամյակների ընթացքում, համաշխարհային մակարդակով, պտղաբերության կամ ծնելիության գումարային գործակիցը (ԾԳԳ)* նվազել է 0.7-ով՝ ներկայում կազմելով 2.5, և, ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների, մինչև 2100 թ.-ը դա կնվազի ևս 0.6-ով: Սակայն, պետք է նշել, որ զարգացման միջին մակարդակ ունեցող որոշ և զարգացման ցածր մակարդակ ունեցող տարածաշրջաններում արձանագրվել է ընդլայնված վերարտադրություն: 2015–2020 թթ. ենթասահարական Աֆրիկայում, Արևմտյան Ասիայում, Հյուսիսային Աֆրիկայում և Օվկիանիայում պտղաբերության մակարդակը բարձր է եղել համաշխարհային միջինից, մինչդեռ մնացած բոլոր տարածաշրջաններում՝ ցածր¹: Ավելին, երեք տասնամյակ է, ինչ եվրոպական և մոտ երկու տասնամյակ՝ Արևելյան Ասիայի որոշ երկրներում արձանագրվում են ցածր պտղաբերության «ռեժիմներ»²:

2020 թ. տվյալների համաձայն՝ դիտարկված երկրների մեջ պտղաբերության ամենացածր գործակիցն ունի Իտալիան՝ 1.24, իսկ ամենաբարձրը՝ Նիգերը՝ 6.74:

Ըստ Եվրոստատի տվյալների՝ ԵՄ անդամ երկրներում պտղաբերության միջին մակարդակը ցածր է հա-

* Ծնելիության գումարային կամ պտղաբերության գործակիցը բնութագրում է երեխաների միջին քանակը, որ կձնի մեկ կինն իր ծնունակ տարիքում՝ ողջ կյանքի ընթացքում ծնելիության տվյալ տարվա մակարդակի պահպանման դեպքում:

¹ World demographic trends Report of the Secretary-General, Commission on Population and Development Fifty-fifth session 25–29 April 2022, file:///C:/Users/User/Downloads/New%20about%20demography.%20UN.pdf, p 5.

² Wanda Cabella, Mathias Nathan; Challenges Posed by Low Fertility in Latin America and the Caribbean <https://lac.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Baja%20fecundidad%20en%20ALC%20%28jun%202018%29%20version%20web%20in-g!%C3%A9s.pdf>, p 7.





Լուսինե ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
դոցենտ

2002 թ. գերազանցությամբ ավարտել է ԵրԺՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ)¹ «Ֆինանսներ և վարկ» մասնագիտությամբ: 2013 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական ասպիրանտ, իսկ 2016 թ.՝ դոցենտի գիտական կոչում: 2010 թ.-ից ՀՊՏՀ աշխատանքի տնտեսագիտության (այժմ՝ բիզնես վարչարարության) ամբիոնի դոցենտ է: Դասավանդել է Միշկոլցի, Պոզնանի տնտեսագիտության և բիզնեսի, Բիալիստոկի տեխնոլոգիական համալսարաններում («Էրազմուս+» ակադեմիական շարժունության ծրագիր): 2019 թ.-ից «Սոցիալական ապահովություն և ապահովագրություն» նեպալյան ամսագրի խմբագրական խորհրդի անդամ է:

Հեղինակ և համահեղինակ է շուրջ երեք տասնյակ գիտական հոդվածների, կոլեկտիվ մենագրությունների, զեկույցների:

 <https://orcid.org/0000-0002-3894-4803>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1


Արտասահմանյան մի շարք երկրների պտղաբերության գործակիցները, 1970 թ., 1995 թ. և 2020 թ.³

մաշխարհային միջինից և 2020 թ.-ին կազմել է 1.59: ԵՄ անդամ երկրների մեջ ամենաբարձր ԾԳԳ ունի Ֆրանսիան՝ 1.88: Վերջինիս հաջորդում են Շվեդիան (1.78), Իռլանդիան (1.77) և Դանիան (1.75)⁴: Այսինքն՝ բարձր եկամտով երկրներում շարունակվում է նեղացված վերարտադրությունը:

Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ պտղաբերության գործակիցը մինչև դարավերջ շուրջ երեք անգամ կնվազի Նիգերում, որն ունի աշխարհի ամենաբարձր

ցուցանիշը, իսկ եվրոպական երկրներում հիմնականում նկատելի են ցուցանիշի պահպանման կամ չնչին աճի միտումներ (գծապատկեր 2):

Գծապատկերի 2-ի տվյալները վկայում են, որ Շվեդիայում, Դանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում, Նորվեգիայում, Իռլանդիայում պտղաբերության գործակիցներն առաջիկա տասնամյակների ընթացքում կմնան գրեթե նույն մակարդակում, սակայն այս երկրներից ոչ մեկը չի հասնի պարզ վերարտադրության ցուցանիշին՝



ԳԾԱՊԱՏԿԵՐ 2

Արտասահմանյան մի շարք երկրների պտղաբերության գործակիցների կանխատեսումները, 2030-2099 թթ.⁵

³ Կազմված է ըստ հղման աղբյուրի տվյալների՝ <https://data.worldbank.org/indicator/SP.DYN.TFRT.IN>
⁴ Eurostat, Statistics Explained, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Fertility_statistics
⁵ Կազմված է ըստ հետևյալ հղման տվյալների՝ <https://knoema.com/atlas/topics/Demographics/Population-forecast/Total-fertility>

2-2.14**։ Իսրայելում կանխատեսվում է պտղաբերության գործակցի նվազում, որը դարավերջին 2.77-ից կդառնա 1.93, այսինքն՝ ընդլայնված վերարտադրությունը կվերաճվի նեղացվածի։ Նվազման միտումներ են կանխատեսվում նաև Թուրքիայում՝ 1.89-ից մինչև 1.73։ Կիպրոսում, Հունաստանում, Սինգապուրում, Հարավային Կորեայում, Իտալիայում, Իսպանիայում, Լյուքսեմբուրգում վերոնշյալ ցուցանիշն ունի աճի միտում, սակայն դիտարկված կանխատեսումային տարիներին պտղաբերության գործակիցը չի գերազանցի նույնիսկ 1.7-ը։

Ֆրանսիայում ծնելիության խթանման նպատակով իրականացվում է ընտանեկան քաղաքականություն, որն ապահովում է, այսպես կոչված, «բարենպաստ ընտանեկան միջավայր»։ Դա ընդգրկում է հետևյալ երեք միջոցառումը.

- տարատեսակ նպաստներ,
- երեխաների խնամքի և դաստիարակության համընդհանուր կազմակերպում՝ նախատեսված բնակչության բոլոր շերտերի համար,
- հարկային արտոնություններ։

Ծնելիության ցածր մակարդակը թեպետ բնորոշ է ԵՏՀ տարածաշրջանի բազմաթիվ երկրների, սակայն ծնելիության մակարդակի բարձրացմանը միտված ծրագրեր իրականացվում են սահմանափակ թվով երկրներում։ Այսպես՝ Սկանդինավյան երկրները բնութագրվում են ընտանիքի ինտենսիվ աջակցությամբ՝ խթանելով կանանց լիարժեք մասնակցությունն աշխատաշուկայում։ Հարավային և Արևելյան Եվրոպայի երկրներում երեխաների խնամքի ծածկույթը փոքր է։ Երկու աշխատող ծնողների համար չկա ընտանիքի պետական աջակցության մոդել, իսկ մանկահասակ երեխաների խնամքի կազմակերպման հիմնախնդիրը լուծում են հիմնականում ընտանիքի անդամները՝ սեփական միջոցներով⁶։ Եվրոպական մի շարք երկրներում մեկ և ավելի երեխա ունենա-

լու դեպքում նախատեսված է հղիության և ծննդաբերության արձակուրդի տևողության ավելացում՝ հիմնականում 2-4 շաբաթ։ Սակայն, կան երկրներ, որտեղ վերոնշյալ ցուցանիշի համար սահմանված է ավելի երկար ժամանակահատված, օրինակ՝ Ռուսաստանում ավելացումը 7.7 շաբաթ է, Չեխիայում և Սլովակիայում՝ 9 շաբաթ, իսկ Լեհաստանում՝ 17 շաբաթ⁷։ Արևմտյան Եվրոպայի երկրներից հայրական արձակուրդի ամենաբարձր տևողությունը սահմանված է Ավստրիայում՝ 31 օր, իսկ ամենացածրը՝ Նիդեռլանդներում՝ 5 օր, որից վճարվում է միայն 2 օրը։ Հարավային Եվրոպայում հայրական արձակուրդի ամենացածր տևողությունը սահմանված է Հունաստանում՝ 2 օր, իսկ ամենաբարձրը՝ Սլովենիայում և Իսպանիայում՝ 30 օր։ Հյուսիսային Եվրոպայի երկրներից առանձնանում է Ֆինլանդիան՝ 54 օր տևողությամբ հայրական արձակուրդով։ Ինչ վերաբերում է Արևելյան Եվրոպայի երկրներին, ապա այստեղ վերոնշյալ ցուցանիշի տևողությունը տատանվում է 5-ից (Հունգարիա) 15 օր (Բուլղարիա)⁸։

Բնակչության ընդլայնված վերարտադրության կարելի է հասնել՝ խթանելով 3-րդ և հաջորդ երեխաների ծնունդը։ Վերը դիտարկված երկրների մեջ երրորդ և բարձր կարգաթիվով ծնվածների ամենամեծ տեսակարար կշիռն ունի Թուրքիան, իսկ ամենացածրը՝ Պորտուգալիան (գծապատկեր 3)։

Հատկանշական է, որ ծնելիության մակարդակի վրա ազդում են ինչպես ազգային, մշակութային, կրոնական, հոգեբանական, այնպես էլ տնտեսական գործոնները։ Շատ հաճախ ընտանիքի չափի վերաբերյալ որոշումներ ընդունելիս հաշվի են առնվում երեխաներին պահելու, դաստիարակելու, կրթելու հետ կապված ծախսերը⁹։

Պտղաբերության գործակցի շարունակական անկումը մարտահրավեր է ծնելիության ցածր մակարդակ ունեցող եր-


** Անհրաժեշտ է, որ պտղաբերության գործակիցը լինի առնվազն 2-2.1, որպեսզի ազգը կարողանա սերնդափոխվել 25 տարին մեկ և հարատևել, այսինքն՝ յուրաքանչյուր կնոջը՝ ընտանիքին բաժին ընկնի 2-2.1 երեխա, որով կապահովվի սուկ պարզ վերարտադրություն (ազգի գոյություն)։

⁶ https://www.oecd.org/els/family/SF_2_1_Fertility_rates.pdf, էջ 1։

⁷ Дмитриевич Б. Е., Материнский, отцовский и родительский отпуска в странах Европы; Стратегические задачи демографического развития: приоритеты и региональные особенности, Десятые Валентеевские чтения, М. 2020, с. 506.

⁸ The MISSOC Comparative tables// Mutual Information System on SocialProtection. URL: <https://www.missoc.org/missoc-database/comparative-tables/>

⁹ Կազմված է ըստ հղման տվյալների՝ OECD Family Database, oe.cd/fdb



Արտասահմանյան մի շարք երկրներում ծնվածների բաշխումն ըստ ծննդի կարգի (%) , 2020 թ.¹⁰

կըրների կառավարությունների համար, քանի որ դա հանգեցնում է բնակչության տարիքային կառուցվածքի փոփոխությունների, արագացնում բնակչության ծերացման տեմպերը, նվազեցնում բնակչության թիվը, ինչպես նաև մեծ բեռ դառնում սոցիալական պաշտպանության համակարգերի համար:

1980-ականներից սկսած՝ Սինգապուրի կառավարությունը պայքարում է ծնելիության անկման դեմ: 2001 թ. երկրի կառավարությունը հաստատել է ծնելիության խթանմանն ուղղված միջոցառումների փաթեթ, որը պարբերաբար բարելավվում է: Դրանում ներառված են վճարովի ծննդաբերության արձակուրդը, երեխայի խնամքի նպաստը, հարկային արտոնությունները, հարկերի վերադարձը, միանվագ վճարումները, ինչպես նաև սահմանված են դրամաշնորհներ այն ընկերությունների համար, որոնք մանկահասակ երեխա ունեցող մայրերի համար ներդնում են ճկուն աշխատանքային ժամանակացույցներ: Թեև Սինգապուրում պահպանվում է երկու երեխա ունեցող ընտանիքի կատարելատիպը, սակայն, ըստ փաստերի, ծնելիության մակարդակն այստեղ շարունակում է ցածր մնալ: Եթե 1990-ական թվականներին Սինգապուրում ԾԳԳ-ն կազմել է 1.7, 2000 թ.-ին՝ 1.45, ապա 2020 թ.-ին՝ 1.2: Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝

2099 թ.-ին Սինգապուրում վերարտադրողական տարիքի մեկ կնոջ հաշվով ծնված երեխաների միջին թիվը կկազմի 1.49¹¹: Պետք է նշել, որ այստեղ բարձրացել է առաջին անգամ ամուսնանալու, մայրանալու միջին տարիքը: Ծնելիության վերահսկման ոլորտում Սինգապուրի փորձը ցույց է տալիս, որ արտամարմնային բեղմնավորման մատչելիությունը և այլ վերարտադրողական տեխնոլոգիաները բավարար չեն, որպեսզի տարեց կանայք կարողանան ծննդաբերել բավարար թվով երեխաներ՝ փոխհատուցելու երիտասարդ կանանց կողմից չապահովված ցուցանիշը¹²: Իսկ երիտասարդ կանանց շրջանում փոխվել է վերարտադրողական վարքագիծը. նրանք նախապատվությունը տալիս են կրթությանը, աշխատանքին, կարիերայի աճին՝ հետին պլան մղելով երեխա ունենալը:

Ընդհանրապես, պետության կողմից իրականացվող ընտանեկան քաղաքականությունը չի կարող արդյունավետ լինել հասարակական այլ գործոններից, օրինակ՝ մշակույթից և տնտեսական վիճակից մեկուսացված: Հետևաբար՝ շատ դժվար է չափել դրա ազդեցությունը: Այնուամենայնիվ, կան հետազոտություններ, որոնք ցույց են տալիս, որ ընտանեկան քաղաքականության, ծնելիության և զբաղվածության միջև գոյություն ունի սերտ կապ:

¹⁰ Կազմված է ըստ հղման տվյալների՝ OECD Family Database, oe.cd/fdb
¹¹ World Data Atlas Topics Demographics Population Forecast, <https://knoema.com/atlas/topics/Demographics/Population-forecast/Total-fertility>
¹² Финансы и развитие, Жизнь долго и хорошо, Демография И Экономическое Благополучие, Март 2020 года, Международный Валютный Фонд, <https://www.imf.org/external/russian/pubs/ft/fandd/2020/03/pdf/fd0320r.pdf>, с. 15-16.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Պտղաբերության ներկա մակարդակին վերաբերող քաղաքականությունները՝ ըստ տարածաշրջանների, 2015-2019 թթ. (երկրների կամ տարածքների թիվը յուրաքանչյուր տարածաշրջանում և աշխարհում)¹³

Քաղաքականությունը, որը վերաբերում է պտղաբերության ներկա մակարդակին երկրների կամ տարածքների թիվը

Տարածաշրջան	Բարձրացման	Նվազեցման	Ներկա մակարդակի պահպանման	Պեղական քաղաքականության բացակայություն	Ընդամենը
Ենթասահարական Աֆրիկա	3	35	2	8	48
Հյուսիսային Աֆրիկա և Արևմտյան Ասիա	9	6	4	5	24
Կենտրոնական և Հարավային Ասիա	4	7	-	3	14
Արևելյան և Հարավարևելյան Ասիա	7	3	1	5	16
Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան	3	8	6	16	33
Եվրոպա և Հյուսիսային Ամերիկա	27	1	4	14	46
Ավստրալիա և Նոր Զելանդիա	-	-	-	2	2
Օվկիանիա*	2	9	2	1	14
Աշխարհ	55	69	19	54	197

Ընտանեկան քաղաքականության միջոցառումները կարող են մշակվել տարբեր նպատակների համար և, ըստ այդմ էլ, կարելի է դասակարգել հետևյալ կերպ¹⁴.

➤ **Երկու աշխարհող ծնողով մոդել.** նման քաղաքականության միջոցառումներն ուղղված են կանանց զբաղվածության մակարդակի բարձրացմանը, աշխատանքի և երեխաների խնամքի համատեղմանը, աշխատանքի ճկուն ժամանակացույցի ներդրմանը, նախադպրոցական հիմնարկներում երեխաների խնամքի կազմակերպմանը, հարկային արտոնությունների տրամադրմանը և այլն:

➤ **Գենդերային հավասարության (սեռադաշնության) ամրապնդում.** այս քաղաքականությունը նպատակաուղղված է վճարովի աշխատանքի և չվարձատրվող պարտականությունների միջև հավասարակշռված բաշխման սահմանմանը: Վերոնշյալ նպատակին հասնելու համար կարող է տրամադրվել ծնողական արձակուրդ՝ հատուկ շեշտադրելով հայրության արձակուրդը:

➤ **Միանվագ վճարներ և բյուջեդային տրանսֆերտներ.** սրանք ուղղված են երե-


խաներ ունեցող և անզավակ ընտանիքների եկամուտների միջև եղած տարբերության կրճատմանը:

➤ **Աղքատության կրճատում և եկամուտների մակարդակի պահպանում.** այս նպատակադրումները հիմնականում իրագործվում են անապահով ընտանիքներին ընտանեկան նպաստների տրամադրմամբ, ինչպես նաև կացարանով ապահովմամբ:

Ըստ ՄԱԿ-ի ուսումնասիրությունների՝ աշխարհի մոտ 197 երկրի կառավարությունների գրեթե երեք քառորդն ունի պտղաբերության մակարդակի վրա ազդելու քաղաքականություն: Ընդ որում, 69 կառավարություն ունի ծնելիության մակարդակի նվազեցման, 55-ը՝ բարձրացման, 19՝ պտղաբերության ներկայիս մակարդակի պահպանման, իսկ 54-ը չունի որևէ պաշտոնական քաղաքականություն (աղյուսակ 1):

Առկա տվյալները վկայում են, որ կառավարությունների որդեգրած պտղաբերության քաղաքականության տեսակների և երկրում արձանագրված պտղաբերության մակարդակի միջև գոյություն ունի

¹³ https://eeca.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Population%20Trends%20and%20Policies%20in%20the%20UNECE%20Region%20%28Russian%29_0.PDF, p. 42.
¹⁴ World Population Policies related to fertility 2021 Policies, United Nations New York, 2021, https://www.un.org/development/desa/pd/sites/www.un.org.development.desa.pd/files/undesa_pd_2021_wpp-fertility_policies.pdf, p. 7.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 4

«Վ» բնակչության տարիքային կառուցվածքի շարժընթացն ըստ խոշորացված խմբերի (աշխատունակ տարիքից բարձր բնակչություն՝ 65+), 1990-2020 թթ.¹⁵

սերտ կապ: Ծնելիության նվազեցման քաղաքականություն որդեգրած 69 երկրից 10 երկիր ունի ծնելիության շատ բարձր, իսկ 50 երկիր՝ միջինից բարձր մակարդակ: Ծնելիության բարձրացման քաղաքականություն իրականացնող 55 երկրի շարքում 40 երկիր ունեցել է ծնելիության ցածր մակարդակ, որից 18-ում՝ ԾԳԳ-ն եղել է ցածր 1.5-ից, իսկ 19 երկիր, որ որոշել է պահպանել ծնելիության ընթացիկ մակարդակը, ունեցել է պարզ վերարտադրություն:

Ամփոփելով արտասահմանյան երկրների ծնելիության խթանման ծրագրերի վերլուծությունը՝ կարող ենք արձանագրել, որ միայն ֆինանսական խթանները բավարար չեն ծնելիության ցանկալի մակարդակ ապահովելու համար: Իրականացվող միջոցառումներում պետք է հաշվի առնվեն ժամանակի ընթացքում մարդկանց փոփոխվող պահանջումները, և գտնվեն այն խթանները, որոնք կնպաստեն ծնելիության մակարդակի բարձրացմանը:

Ծնելիության խթանման միջոցառումները «Վ-ում»: 1990-2020 թթ. ծնելիության (պտղաբերության) անկման, մահացության և արտագաղթի աճի պատճառով «Վ» բնակչության տարիքային կառուցվածքը զգալի փոփոխությունների է ենթարկվել՝ ուղեկցվելով երիտասարդ բնակչության նվազմամբ և տարեցների մասնաբաժնի ավելացմամբ (գծապատկեր 4):

Դիտարկվող ժամանակահատվածում 65 և բարձր տարիքի անձանց մասնաբա-

ժինը «Վ» բնակչության թվում ավելանալով 6.8 տոկոսային կետով՝ 2020 թ.-ին կազմել է 12.6%: Այսինքն՝ «Վ» բնակչությունը, սկսած 1990-ականների կեսերից, համարվում է ծերացող, քանի որ 65 և բարձր տարիքի բնակչության մասնաբաժինը հատել է սահմանված 7%-ի շեմը¹⁶:


«Վ-ում» ժողովրդագրական իրավիճակի փոփոխության հետևանքով հրամայական է դարձել այնպիսի քաղաքականության մշակումը, որը միտված կլինի ծնելիության խթանմանը, արտագաղթի կանխարգելմանը, ինչպես նաև ժողովրդագրական ծերացման հաղթահարմանը:

Արդեն երեք տասնամյակ է՝ Հայաստանի բնակչության թիվը նվազում է, որի պատճառներից մեկն էլ պտղաբերության ցածր գործակիցն է (գծապատկեր 5):

1994 թ.-ին նորանկախ «Վ-ում» ծնելիության գումարային գործակիցը ցածր է եղել պարզ վերարտադրության մակարդակից՝ իր ցածրագույն աստիճանին հասնելով 2002 թ. (1.208 երեխա): Այնուհետև նշված ցուցանիշը հիմնականում դրսևորել է աճի միտում. 2019 թ.՝ 1.598 և 2020 թ.՝ 1.656 երեխա:


Ուշադրության է արժանի այն փաստը, որ ծնելիությունն արագ տեմպերով նվազել է գյուղական բնակավայրերում. մասնավորապես՝ 1970 թ. համեմատ 2020 թ.-ին գյուղական բնակավայրերում պտղաբերության գործակիցը նվազել է 3 անգամ՝ կազմելով 1.4 (գծապատկեր 6):

¹⁵ Կազմված է «Վ» տվյալների հիման վրա, <https://armstat.am/am/?nid=14>
¹⁶ Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2001 թ., «Վ» ԱԿԾ, էջ 24-25, եր., 2002:



ԳԾԱՊԱՏԿԵՐ 5

«Ատղաբերության ցուցանիշի շարժընթացը, 1990-2020 թթ.»¹⁷



ԳԾԱՊԱՏԿԵՐ 6

«Ատղաբերության ցուցանիշի շարժընթացն ըստ բնակավայրերի, 1970-2020 թթ.»¹⁸

Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ ՀՀ-ում պտղաբերության գործակիցը մինչև դարավերջ կշարունակի մնալ նեղացված վերարտադրության շրջանակում (գծապատկեր 7), իսկ բնակչության թիվը կդրսևորի նվազման միտում և 2100 թ. կկազմի 2.039.000 մարդ (գծապատկեր 8):

Եթե կանխատեսումներն իրականանան, ապա ՀՀ-ում պտղաբերության գործակիցը 2099 թ.-ին կհասնի 1.78-ի: Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում Վրաստանի, Ադրբեջանի, Իրանի և Թուրքիայի վերոնշյալ գործակիցները կկազմեն համապատասխանաբար՝ 1.8, 1.74, 1.82 և 1.73: Ընդ որում, ՀՀ սահմանակից երկրներում 2020 թ.-ին պտղաբերության գործակիցը բարձր է եղել 2.0-ից:


Գծապատկեր 8-ի տվյալներից երևում է, որ բացի Իրանից, մնացած բոլոր երկրներում նկատվում է բնակչության քանակի

նվազման միտում: 2100 թ.-ին, 2025 թ.-ի համեմատ, Իրանում բնակչության թիվը կաճի շուրջ 11%-ով, իսկ ՀՀ-ում, Վրաստանում, Ադրբեջանում և Թուրքիայում կգրանցվի բնակչության քանակի նվազում՝ կազմելով, համապատասխանաբար, 31.5%, 36%, 12.4% և 0.6%: Ինչպես ցույց են տալիս կանխատեսումները, ՀՀ-ն կանգնած է ազգային անվտանգությանը սպառնացող լուրջ մարտահրավերի առջև:

Յուրաքանչյուր երկրում, կախված տնտեսության զարգացման մակարդակից ու ժողովրդագրական իրավիճակից, մշակվում և իրականացվում է ակտիվ և/կամ պասիվ սոցիալ-ժողովրդագրական քաղաքականություն:


Պետք է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում մինչև 2014 թ. իրականացվել է պասիվ սոցիալ-ժողովրդագրական քաղաքականություն, որի հիմնական նպատակը եղել է անապահով ընտանիքներին

¹⁷ Կազմված է ՀՀ ՎԿ տվյալների հիման վրա, <https://armstat.am/am/?nid=14>
¹⁸ <http://www.eurasiancommission.org/ru/act/dmi/workgroup/Documents/>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 7

Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ պտղաբերության գործակցի շարժընթացը ՀՀ-ում և սահմանակից երկրներում, 2025-2099 թթ.¹⁹



ԳԾԱՊԱՏԿԵՐ 8

Ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների՝ բնակչության թվի շարժընթացը ՀՀ-ում և սահմանակից երկրներում, 2025-2100 թթ.²⁰

սոցիալական օգնության տարբեր ձևերի տրամադրումը: Այդուհետ միայն երկիրը սկսել է վարել ակտիվ ժողովրդագրական քաղաքականություն:

Ինչպես աշխարհի գրեթե բոլոր երկրներում, այնպես էլ ՀՀ-ում աշխատող կանանց տրամադրվում է հղիության և ծննդաբերության վճարովի (նպաստ) արձակուրդ՝ պահպանելով աշխատողի աշխատատեղը²¹.

- 1) 140 օր (70 օր՝ հղիության, 70 օր՝ ծննդաբերության),
- 2) 155 օր (70 օր՝ հղիության, 85 օր՝ ծննդաբերության)՝ բարդ ծննդաբերության

դեպքում,
3) 180 օր (70 օր՝ հղիության, 110 օր՝ ծննդաբերության)՝ միաժամանակ մեկից ավելի երեխաներ ունենալու դեպքում:


Աշխատող կանանց հղիության և ծննդաբերության նպաստը տրվում է ՀՀ օրենսդրությամբ հաշվարկված միջին օրական աշխատավարձի 100 տոկոսի չափով:

Շեռաքրքրական միտում է նկատվել մայրության նպաստ ստացող աշխատող և չաշխատող մայրերի մասնաբաժիններում. 2020 թ.-ին չաշխատող մայրերի մասնաբաժինը կազմել է 69%, իսկ աշխատողներինը՝ 31% (գծապատկեր 9): Այսինքն՝

¹⁹ Կազմված է ըստ հղման աղբյուրի տվյալների՝ <https://knoema.com/atlas/topics/Demographics/Population-forecast/Total-fertility>

²⁰ Կազմված է ըստ հղման աղբյուրի տվյալների՝ <https://knoema.com/atlas/topics/Demographics/Population-forecast/Population>

²¹ Տես ՀՀ աշխատանքային օրենսգիրք, հոդված 172, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150003>



ԳԾԱՊԱՏԿԵՐ 9

Մայրության նպաստ ստացողների թիվը (մարդ)²²

կարող ենք արձանագրել, որ չաշխատող մայրերին տրամադրվող նպաստն արդյունավետ գործիք է հանդիսացել ծնելիության խթանման համար:

«Չաշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածով մինչև 2020 թ. նախատեսված էր միայն չվճարվող հայրության արձակուրդի հղիության և ծննդաբերության արձակուրդում գտնվող, ինչպես նաև մինչև մեկ տարեկան երեխային խնամելու համար արձակուրդում գտնվող կնոջ ամուսնու համար, սակայն այդ արձակուրդի ընդհանուր տևողությունը չէր կարող գերազանցել երկու ամիսը: 2020 թ. սեպտեմբերի 29-ին ուժի մեջ մտավ նոր փոփոխություն, այն է՝ երեխայի ծնվելու օրվանից հետո՝ 30 օրվա ընթացքում, նորածնի հոր ցանկությամբ տրամադրվում է հինգ աշխատանքային օր տևողությամբ վճարովի արձակուրդ, որի յուրաքանչյուր օրվա համար գործատուն վճարում է աշխատողի միջին օրական աշխատավարձի չափով²³: Վերոնշյալ փոփոխությունը շատ կարևոր է, սակայն կարծում ենք՝ չպետք է սահմանվեր ժամկետ (մինչև 30 օր), քանի որ երեխայի կյանքի առաջին տարին ամենակարևոր ժամանակահատվածն է: Բացի

այդ, կարելի էր ավելացնել նաև վճարովի արձակուրդի տևողությունը՝ այս դեպքում արդեն պետական բյուջեի միջոցների հաշվին:

Ծնելիության խթանման վերոնշյալ միջոցառումներից զատ, մեր հանրապետությունում գործում են նաև մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար տրամադրվող արձակուրդը, երեխայի ծննդյան միանվագ նպաստը: 2022 թ.-ին «Չ-ում ծնելիության խթանման նպատակով ներդրվեց նոր գործիք՝ 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ երեխային համար 50.000 դրամ ամսական վճար՝ մինչև երեխայի 6 տարեկան լրանալը²⁴: Սակայն, այս միջոցառումը դեռևս նոր է և միայն որոշակի ժամանակահատված հետո կարելի է խոսել դրա արդյունավետության մասին: Հանրապետությունում իրականացվել և իրականացվում են բնակարանային ապահովության մի շարք ծրագրեր, որոնց շրջանակում իրավական, ֆինանսական և կազմակերպչական համապատասխան կառուցակարգերի ներդրմամբ պետական աջակցություն են տրամադրվում բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող ընտանիքներին: Հաշվի առ-

²² Կազմել են հեղինակներն ըստ «ՎԿ տվյալների բազայի, <https://www.armstat.am/am/>
²³ «Չ աշխատանքային օրենսգրքի, հոդված 176.1, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=150003>
²⁴ <https://www.1lurer.am/hy/2021/08/28/50-%D5%B0%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80-%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%D5%9D-3-%D6%80%D5%A4-%D6%87-%D5%B5%D5%B8%D6%82%D6%80%D5%A1%D6%84%D5%A1%D5%B6%D5%B9%D5%B5%D5%B8%D6%82%D6%80-%D5%B0%D5%A1%D5%BB%D5%B8%D6%80%D5%A4-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%D5%A8/545345>

ներով նաև այն հանգամանքը, որ պետական աջակցության հիմնական նպատակներից է երեխա ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավումը մարզային բնակավայրերում, կարելի է պնդել, որ այս ուղղությամբ լրացուցիչ միջոցառումների կամ համապատասխան փոփոխությունների կարիք ևս կա:

Ըստ էության, ՀՀ-ում ծնելիության խթանման առումով գործում են բազմաթիվ ծրագրեր, որոնք, սակայն, չեն ապահովել ցանկալի արդյունք, այն է՝ ԾԳԳ-ն հասցնել առնվազն պարզ վերարտադրության մակարդակի: Այդ ծրագրերի շնորհիվ՝ հնարավոր է եղել միայն պահպանել ներկայիս մակարդակը:

Այսպիսով՝ սոցիալական ծրագրերի գրավչությունը մեծացնելու նպատակով

պետք է մշակել և բազմազավակ ընտանիքներին տրամադրել հարկային արտոնություններ՝ կախված երեխաների կարգաթվից: Այդ միջոցառումն առաջնահերթ պետք է իրականացնել գյուղական բնակավայրերում, քանի որ վիճակագրական տվյալները վկայում են, որ պտղաբերության գործակիցը կտրուկ կերպով նվազել է հենց այստեղ: Հաշվի առնելով հայ կնոջ կերպարը, մի կողմից նրա աշխատանք ունենալու ձգտումը, իսկ մյուս կողմից՝ երեխաներին մեծացնելու ցանկությունը, պետք է մանկահասակ երեխաներ ունեցող մայրերի համար սահմանել ճկուն աշխատանքային ժամանակացույց՝ մինչև երեխայի երեք տարին լրանալը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ աշխատանքային օրենսգիրք, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=143703>
2. ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազա, <https://armstat.am/am/?nid=14>
3. Дмитриевич Б. Е., Материнский, отцовский и родительский отпуска в странах Европы; Стратегические задачи демографического развития: приоритеты и региональные особенности, Десятые Валентевские чтения, М. 2020, стр. 504-511.
4. Финансы и развитие, Жизнь долго и хорошо, Демография и экономическое благосостояние, Март 2020 года, Международный валютный фонд, <https://www.imf.org/external/russian/pubs/ft/fandd/2020/03/pdf/fd0320r.pdf>
5. Eurostat, Statistics Explained, https://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php?title=Fertility_statistics
6. OECD Family Database, https://www.oecd.org/els/family/SF_2_1_Fertility_rates.pdf
7. The MISSOC Comparative tables// Mutual Information System on SocialProtection. URL: <https://www.missoc.rg/missoc-database/comparative-tables/>
8. Wanda Cabella Mathias Nathan, Challenges Posed by Low Fertility in Latin America and the Caribbean, UNFPA, 2018, <https://lac.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Baja%20fecundidad%20en%20ALC%20%28jun%202018%29%20version%20web%20ingl%20C3%A9s.pdf>
9. World demographic trends Report of the Secretary-General, Commission on Population and Development Fifty-fifth session 25–29 April 2022, file:///C:/Users/User/Downloads/New%20about%20demography.%20UN.pdf
10. World Population Policies related to fertility 2021 Policies, United Nations New York, 2021, https://www.un.org/development/desa/pd/sites/www.un.org.development.desa.pd/files/undesd_pd_2021_wpp-fertility_policies.pdf
11. <https://www.britannica.com/place/South-America/The-demographic-transition-and-fertility>
12. https://eeca.unfpa.org/sites/default/files/pub-pdf/Population%20Trends%20and%20Policies%20in%20the%20UNECE%20Region%20%28Russian%29_0.PDF
13. <https://www.1lurer.am/hy/2021/08/28/50-%D5%B0%D5%A1%D5%A6%D5%A1%D6%80-%D5%A4%D6%80%D5%A1%D5%B4%D5%9D-3-%D6%80%D5%A4-%D6%87-%D5%B5%D5%B8%D6%82%D6%80%D5%A1%D6%84-%D5%A1%D5%B6%D5%B9%D5%B5%D5%B8%D6%82%D6%80-%D5%B0%D5%A1%D5%BB%D5%B8%D6%80%D5%A4-%D5%A5%D6%80%D5%A5%D5%AD%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6-%D5%AF%D5%A1%D5%BC%D5%A1%D5%BE%D5%A1%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%B6%D5%B8%D6%80-%D5%AE%D6%80%D5%A1%D5%A3%D5%AB%D6%80%D5%A8/545345>

Манук МОВСИСЯН*Декан факультета управления (менеджмента), АГЭУ,
кандидат экономических наук, доцент***Лусине КАРАПЕТЯН***Доцент кафедры бизнес администрирования, АГЭУ,
кандидат экономических наук*

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА

**ПРИВЛЕКАТЕЛЬНОСТЬ СОЦИАЛЬНЫХ ПРОГРАММ И ТУРБУЛЕНТНОСТЬ КОЛЕБАНИЯ
УРОВНЯ РОЖДАЕМОСТИ В РА**

С конца 20 века в мире отмечается тенденция к снижению глобальной фертильности. По прогнозам ООН, в середине XXI века продолжится снижение мировой рождаемости и в 2045-2050 годах среднее число детей, рожденный от одной женщины репродуктивного возраста, составит 2,2, а в 2100 году - 1,9. Следовательно, многие страны мира приняли меры по стимулированию рождаемости. Почти во всех странах мира, в том числе и в Республике Армения, социально-демографическая политика поощрения рождаемости реализуется в основном двумя группами мер: установленные законом отпуска и пособия.

Начиная с середины 20 века коэффициент рождаемости (среднее число детей, рожденный от одной женщины репродуктивного возраста) в Армении снизился с 4,7 до 1,66 детей в 2020 году. Иными словами, за наблюдаемый период в Армении зафиксировано снижение воспроизводства, кроме того, нельзя забывать о негативных последствиях бедности, эмиграции, безработицы, Арцахской войны и пандемии.

Если рождаемость продолжит снижаться, Армения в ближайшем будущем окажется в гораздо более опасном положении, так как численность населения репродуктивного возраста продолжит сокращаться, что в свою очередь приведет к снижению репродуктивной способности населения.

Следовательно, становится актуальным пересмотр программ, направленных на повышение рождаемости в Армении, и необходимость сделать их более привлекательными.

В статье речь идет о причинах снижения рождаемости в Армении и ряде зарубежных стран, мерах, принимаемых национальными правительствами для повышения рождаемости, и их влиянии на рождаемость.

Ключевые слова: *коэффициент рождаемости, пособия, рождаемость, отпуск, уход за детьми, гибкий график работы*

Manuk MOYSISYAN*Dean of the Department of Management, ASUE,
PhD in Economics, Associate Professor***Lusine KARAPETYAN***Associate Professor of the Chair of Business Administration, ASUE,
PhD in Economics*

SOCIAL POLICY

**ATTRACTIVENESS OF SOCIAL PROGRAMS AND BIRTH RATE FLUCTUATION
IN THE REPUBLIC OF ARMENIA**

Since the end of the 20th century, the world has registered a decline in the global fertility rate. According to UN forecasts, the fertility decline rate in the world will continue up to mid 21st century and by 2045-2050 the average number of births to a woman of reproductive age will be 2.2, and in 2100 - 1.9. Consequently, many countries around the world have adopted measures to promote the birth rate. In almost all the countries, including the Republic of Armenia, the socio-demographic policies of birth promotion is mainly implemented through two methods: legally defined vacations and benefits.

In the mid-20th century, the fertility rate (the average number of children a woman would bear in her lifetime if she experienced the current age-specific fertility rates throughout her reproductive years) in Armenia decreased from 4.7 births, and in 2020 it was already at 1.66. During the observed period, the decline in the reproduction rate was registered in the country, this was also negatively impacted by poverty, emigration, high unemployment, the Artsakh war and the pandemic. If the birth rate continues to decline, Armenia will be in a much more dangerous position in the near future, as the population of reproductive age will continue to decline, which, in turn, will lead to a decrease in the reproductive capacity of the population.

The paper addresses the reasons, measures taken to improve and their impact on the decline of the birth rate both in Armenia and in a number of foreign countries.

Key words: *fertility rate, benefits, birth rate, vacation, child care, flexible work schedule*